

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՐԶ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԻՍՈՒՍԻ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԱՌԹԻՒ

Մեկնեցաւ ի նոցանէ և վերանայր յերկինս:
Ղուկ. ԻԴ—51

Կեանքի արժէքը տարիների թուի շատութեամբ չէ
չափուում: Յիսուս երեսուն երեք տարի ապրեց երկրագնդի
վրայ, երեք տարի միայն գործի վրայ երևեցաւ, և երբ
քաժանուեց այս կեանքից, իր ետեւը թողեց տիեզերական
անշնջելի տապաւորութիւն, որ 20 դարերից ի վեր աշխարհի
քաղաքակրթութիւնն է յեղաշրջում:

Յիսուսի վերացումը իր կեանքի փառապատկը կազ-
մեց, քանի որ նա յաղթութեան կեանքով էր ապրած այս
աշխարհի մէջ: Կեանքի փշտ առապարհների միջից անցած
էր նա, յաղթելով ամեն տխուր խոչընդոտների, առանց սեւ-
ցնելու սակայն իր ձիւնանման սպիտակ զգեստը անիրա-
ւութեան, կեղծիքի, նախանձի և այլ մոլութիւնների գետ-
նաքարշ ազդեցութիւններով:

Յիսուսի կեանքը նուիրումի կեանք էր: Նա իրեն հա-
մար չապրեց, այլ վառանք իր կեանքը ուրիշների փրկու-
թեան համար: Ինքը մարգացաւ, մարդը արտուածացնելու
համար: Մեծն Ազէքսանդրների, Կեսարների, Նապոլիոն-
ների կեանքի վերջն էլ սե ու տխուր գոյներով կրնկարուի,
բայց Յիսուսի կեանքի վախճանը փառաւորումով կրկերջա-
նայ: Նա մարդկանց սրտերը գրաւեց սիրոյ և անձնուի-
րութեան սկզբունքով: Ուստի և զարմանալի չէ, որ երբ նա
երկինք բարձրացաւ՝ դարձեալ ապրում էր բիւրաւոր սրբ-
տերի մէջ, որոնք պաշտեցին Նորան, իբրև Փրկիչ և իբրև
իրենց Տէրը ու Աստուածը:

Յիսուսի կեանքը Աստուծոյ կաճարելութիւնը կը ներ-
 փակէր իր մէջ: Իբրեւ հայելի կարտացոլացնէր Աստուծոյ
 ներկայութիւնը, կարեկցութիւնը, և անսպառ գութը: Իբրեւ
 կենդանի գիր, ուր կը կարդացուէին արդարութեան, սիրոյ
 և ճշմարտութեան սկզբունքները: Մի կատարեալ կեանք,
 որ մարմնացել էր իր մէջ Աստուծուն և Նորա ստորագե-
 լիքները:

Հետեւեալ՝ երբ կը բաժնուէր իր սիրելի աշակերտ-
 ներից՝ զրամական հարստութիւն չունէր նրանց կտակելու
 համար և ոչ էլ աշխարհի փառքն ու պերճանքը: Նա երկու
 պարզ բան թողեց նրանց՝ մէկը իր վարդապետութիւննե-
 րը՝ արդարութեան, սիրոյ և ճշմարտութեան պարզ սկզբ-
 բունքները և միւսն իր կեանքը: Առաջինը շատ արժէք
 չպիտի ունենար, եթէ երկրորդը նորա լրացուցիչը չը լինէր:
 Արդ, Յիսուսի ժառանգած ամբողջ զանձը իր ապրած կեանքն
 էր, մի կեանք, որի նմանը չէր տեսնուած երբեք: Յիսուսի
 աշակերտները առաջին անգամ իրենց ձեռքը գիրք չունէին
 ժողովրդին քարոզելու համար, նոցա Աւետարանը Յիսուսի
 ապրած կեանքն էր: Նոքա ոչ զրամ ունէին ժողովուրդը
 սիրաշահելու և ոչ էլ սուր ունէին նրանց բռնութեամբ
 դարձի բերելու: Նոցա բոլոր ունեցածը, քարոզի նիւթը՝
 մէկ բան էր միայն՝ Յիսուս և Նորա կեանքը: Եւ Յիսու-
 սի այդ պարզ բայց սիրագեղ ու ներշնչող կեանքն էր,
 որ յետոյ Աւետարաններ արտադրեց ու բիւրաւոր
 սրտեր ու հոգիներ իրեն զրաւելով Քրիստոնէութեան հիմքը
 դրաւ:

Յիսուս երբ իր մասնութեան գիշերը կը ճանապար-
 հորդէր Ձիթենեաց սարից Գեթսեման անցնելու համար,
 Ձիթենեաց լեռը Նորա աչքին առջև շատ մթին ու մի սև
 տեսարան կը պարզէր: Ուր Յիսուս գիշերուան խորին՝ բայց
 տխուր լուծեանը մէջ կզգար Գեթսեմանիի սրտաճմլիկ
 տառապանքները և Գողգոթայի արիւնալից ու սրտառուչ
 մահուան արհաւիրքները: Բայց այդ նոյն լեռն է՝ որ իր
 համբարձման օրը, կեանքի վերջին հանգրուանին մէջ շատ
 մխիթարական տեսարան կը բանայ Նորա առջև, ուր ոչ


Գեթսեմանիի վշտերը և ոչ էլ Գողգոթայի արիւնարբու-
շարչարանքները կան, այլ ամէն ինչ լրացած է այնտեղ:
Յիսուս իրագործած էր կեանքի նպատակը, այլ ևս իրեն
կրօնայ երկինք բարձրանալ, ստանալու համար իր Հօրը
ձեռքից յաղթութեան փառապատկը: Մարդիկ որչափ ունին
իրենց կեանքի պայքարին մէջ Ձիթենեաց լեռներ, տագ-
նապալից վայրկեաններ, ուր իրենց աչքին առջև պար-
զում են տխուր տեսարանները՝ կարող են շուտով յաղթու-
թեան տեսարանների փոխուել, եթէ նոքա ունենան պէտք
եղած հաւատքը, կորովը ու բարոյական քաջութիւնը դի-
մադրելու կեանքի այլ և այլ խոչընդոտներին:

Յիսուս համբարձաւ երկինք, բայց կապրի դարձեալ
երկրի վրայ, իր եկեղեցիներին մէջ, հաւատացեալների
սրտին ու կեանքին մէջ: Քսան դարերից ի վեր աշխարհ
զգացած է նորա ներկայութիւնն ու ազդեցութիւնը ու
պիտի զգայ նաև յաւիտեան:

Գր. Սարաճեան *)

Ս. Էջմիածին,

10 մայիսի 1914



*) Պարոն Սարաճեան աւարտել է եէյլ համալսարանի առ-
տուածարանական ճիւղը: Ծնթ. Խմբ.